

Տրամաբանական խնդիրներ



1. Այն ի՞նչն է, որ պատկանում է ձեզ, բայց ուրիշներն ավելի շատ են օգտագործում:

2. Արդյոք աքաղաղը կարո՞ղ է իրեն թռչունն անվանել:

3. Այն ի՞նչն է, որ կարելի է պատրաստել, բայց ուտել չի կարելի:

4. Քառակուսի սեղանի մի անկյունը կտրեցին: Քանի՞ անկյուն ունի այժմ սեղանը:

5. Ի՞նչը չի մտնի ամենամեծ կաթսայի մեջ:

6. Տղան աչ ձեռքում բռնել է մեկ կիլոգրամ երկաթ, իսկ ձախում մեկ կիլոգրամ բամբակ: Ո՞ր ձեռքն է ավելի ծանրաբեռնված:

7. Ո՞ր կենդանիներն են միշտ բաց աչքերով քնում:

8. Գյուղացին պետք է գետի մի ափից մյուսը տեղափոխեր գայլին, այծին ու կաղամբ: Սակայն նավակի մեջ կարող են տեղավորվել միայն գյուղացին և կամ գայլը, կամ այծը, կամ կաղամբը: Սակայն, եթե գայլին այծի հետ թողնեն ափի վրա, գայլը կուտի այծին, իսկ եթե այծին ու կաղամբը թողնեն ափի վրա՝ այծը կուտի կաղամբը: Ինչպե՞ս պետք է վարվի գյուղացին:

Լուծում 2. Գյուղացին առաջինը տեղափոխում է այծին ու դատարկ նավակով վերադառնում մյուս ափ: Այնտեղ նա վերցնում է կաղամբը ու բերում այն այծի մոտ, ապա այծի հետ վերադառնում դեպի գայլը: Այծին թողնելով ափին, գայլին տեղափոխում է կաղամբի մոտ, ապա վերադառնում այծի հետևից:

9. Ինչո՞ւ մացառախոզը չի կարող խեղդվել:

10. Ո՞րն է ամենաբարձր խոտը:

11. Աննան թիվ մտապահեց: Այդ թվին ավելացրեց 2, հանեց 4, արդյունքը բազմապատկեց 3-ով, ապա բաժանեց 2-ի: Ստացավ 9: Ի՞նչ թիվ է մտապահել Աննան:

12. Սոճու վրա 40 նարինջ էր աճել: Նրանցից 10-ը հասունացավ ու ցած ընկավ: Քանի՞ նարինջ մնաց սոճու վրա:

13. Լուսամփոփի վրա կար 20 լամպ: Դրանցից 5-ը փչացավ: Քանի՞ լամպ մնաց լուսամփոփի վրա:

Կարենն ու Կարինեն միասին քայլեցին 5կմ: Քանի՞ կիլոմետր քայլեց նրանցից

յուրաքանչյուրը:

14. Իմ հայրը որդի ունի, բայց ես եղբայր չունեմ: Այդ ինչպե՞ս:

15. Սոնան 5 տարեկան է, իսկ Սուրենը՝ 7: Որքա՞ն կլինի նրանց տարիքային տարբերությունը 3 տարի հետո:

16. Կաղնու վրա կա 7 ճյուղ, իսկ յուրաքանչյուր ճյուղի վրա՝ 3 կոն: Քանի՞ կոն է աճում կաղնու վրա:

17. Մի ջայլամը թռավ դեպի լճակը 5 րոպեում, իսկ մյուսը՝ 10 րոպեում: Ո՞ր ջայլամն ավելի արագ թռավ: